



«Երիտասարդ վերլուծաբանների  
հայաստանյան կենտրոն» ՀԿ



«Հայ մարզային  
երիտասարդություն» ՀԿ

**«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԶԵՐԻ»  
երկօրյա աշխատաժողովի ամփոփում  
(դեկտեմբերի 2-3, 2016)**

«Հայ մարզային երիտասարդություն» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ 2016 թվականի դեկտեմբերի 2-3-ը «Երիտասարդները հանուն մարզերի» խորագիրը կրող երկօրյա աշխատաժողովի ընթացքում տարբեր մարզերից հավաքված երիտասարդներ խոսեցին այն հիմնախնդիրների մասին, որոնք նկատում են ոչ միայն իրենց, այլև ընդհանրապես հայաստանյան մարզերում:

Սույն վերլուծությունն արդյունք է «Երիտասարդ վերլուծաբանների հայաստանյան կենտրոն» և «Հայ մարզային երիտասարդություն» հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության, որի նպատակն է վերհանել երկօրյա աշխատաժողովի ընթացքում բարձրացված խնդիրները, մեկնաբանել դրանք, քննարկել առաջարկվող լուծումների իրատեսությունը, օգտակարությունը և ամփոփելով աշխատաժողովի բովանդակությունը՝ այդ ամենին տալ լրացումներ ու գնահատականներ:

Քննարկումն առավել արդյունավետ կազմակերպելու համար կիրառվեց Word Cafe ձևաչափը, որի արդյունքում հիմնախնդիրները բաժանվեցին 5 մեծ խմբերի, և առաջարկվեցին լուծումներ յուրաքանչյուրի համար:

Խնդիրները ներկայացվում են ըստ քննարկման հերթականության.

**1. Բնապահպանական խնդիրներ**

Աշխատաժողովի քննարկումների ընթացքում երիտասարդները բարձրացրել էին բնապահպանական խնդիրներ՝ առանձնացնելով երեք կետեր՝ անտառահատում, շրջակա միջավայրի աղտոտում և գործարանային թափոններ:

Ա. Անտառահատումն արդի կարևորագույն բնապահպանական հիմնախնդիրներից է: Մասնավորապես մեծ վնաս են հասցնում ապօրինի և արգելված գոտիներում իրականացվող

հատումները: Հաշվի առնելով, որ Հայաստանը սակավանտառ երկրների շարքին է դասվում՝ սա լուրջ մարտահրավեր է: Այս ամենը հանգեցնում է ոչ միայն էկոլոգիական մեծ վնասների, այլև անտառային անապատացման, որն անդառնալի վնաս է հասցնում էկոհամակարգին, որը վերականգնելը, եթե ոչ անհնարին, ապա բավական բարդ խնդիր է:

Երիտասարդները խնդրի լուծման տարբերակը տեսնում էին պարբերաբար կազմակերպվող ծառատունկների մեջ՝ պետական, հասարակական կազմակերպությունների և մասնավոր նախաձեռնությունների մակարդակում, դպրոցականների, երիտասարդների և տեղական բնակչության հետ անցկացվող համապատասխան դասընթացների միջոցով՝ էկոլոգիական կրթության մակարդակը բարձրացնելու նպատակով:

Բ. Շրջակա միջավայրի աղտոտման հսկայական բաժինը երիտասարդները մարդահարույց աղտոտիչներին էին վերագրում՝ արդյունաբերական, տրանսպորտային և կենցաղային թափոններին:

Հարկավ, մարզերում, մասնավորապես գյուղական համայնքներում աղբահանության բացակայությունը, բնակչության բնապահպանական տեղեկացվածության ցածր մակարդակը հանգեցնում են շրջակա միջավայրի՝ կենցաղային աղբով աղտոտմանը և բազմաթիվ աղբակույտերի առաջացմանը: Նախ, Հայաստանում այսօր աղբի հեռացումը կատարվում է գրեթե միայն քաղաքային համայնքներում, գյուղական համայնքների գերակշիռ մասում աղբը չի հեռացվում, իհարկե կան բացառություններ (Վեդուրի տարածաշրջանի 15 գյուղական համայնքները, Ախուրյան համայնքը): Բացի այդ այնպիսի ռեսուրսներով, ձևերով և մեթոդներով, ինչպես նաև մտածելակերպով, որ ներկայումս իրականացվում է աղբահանությունը, հնարավոր չէ նվազեցնել դրա բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա:

Մասնակիցները վերոնշյալ խնդիրների լուծումը տեսնում են ինչպես համապատասխան օրենսդրական կարգավորումների մեջ՝ տույժեր, տուգանքներ սահմանելով, այնպես էլ՝ նպատակաուղղված տարաբնույթ բնապահպանական ակցիաների իրականացման մեջ, որի նախաձեռնողները կլինեն թե՛ պետական սեկտորները, թե՛ տարբեր հասարակական կազմակերպություններ և թե՛ կամավորական խմբեր ու շահառու այլ կողմեր:

Մասնակիցների առաջարկին կարելի է հավելել նաև աղբահանության ապահովման և աղբի վերամշակման իրականացումը: Դրա համար նախ պետք է ուսումնասիրել համայնքում արտադրվող կենցաղային աղբի բաղադրությունը, այնուհետև սկսել տեսակավորումը, վերամշակվող աղբի առանձնացումն ընդհանուր աղբից: Սա հնարավորություն կտա զգալիորեն կրճատել հեռացվող աղբի ծավալները:

Գ. Հաջորդը գործարանային թափոնների խնդիրն էր: Հանքարդյունաբերությունը ՀՀ տնտեսության գերակա ճյուղերից մեկն է և արտահանման կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող ոլորտը: Սակայն վերջինիս ազդեցությունը շրջակա միջավայրի վրա ևս տեսակարար մեծ կշիռ ունի: Ապահովելով որոշակի դրական ազդեցություններ ստեղծված աշխատատեղերի, վճարված հարկերի, բարելավված ենթակառուցվածքների տեսքով՝ հանքարդյունաբերությունը միևնույն ժամանակ հանդիսանում է շրջակա միջավայրի աղտոտման հիմնական ոլորտներից մեկը՝ ընդ որում, աղտոտման հետևանքով հասցված վնասները հիմնականում գնահատված չեն և համահունչ չեն փոխհատուցվում: Այս առումով

բնապահպանական քաղաքականության տնտեսական մեխանիզմները լուրջ վերանայման կարիք ունեն։ Բացասական հետևանքների կանխման համար պահանջվում է բնապահպանական հարցերի կայուն կառավարում՝ սկսած հանքի հետախուզումից և նախագծումից, դրա շահագործման կյանքի պարբերաշրջանից մինչև շահագործումից հանումն ու տեղանքի վերականգնումը, և սա պետական մարմինների կողմից լուրջ մոտեցումներ է պահանջում։

Մասնակիցները խնդրի լուծման տարբերակներից մեկը դիտարկում էին բնակելի տարածքներից գործարանների տեղափոխումը, որը, թերևս, լավագույն տարբերակը կլիներ, սակայն քիչ իրատեսական գոնե արդեն առկա գործարանների պայմաններում։ Այլընտրանքային լուծումներ կարող են լինել հանքարդյունաբերական թափոնների դասակարգումը և հարկման դաշտ բերումը՝ ապահովելով լրացուցիչ ֆինանսական միջոցներ և հանդիսանալով ռեսուրսների ռացիոնալ օգտագործման գործիք։ Բնապահպանական վճարների դրույքաչափերը պետք է հիմնված լինեն շրջակա միջավայրին, մարդու առողջությանը հասցված իրական վնասի գնահատման կամ նոր, մաքրող և սակավ աղտոտող տեխնոլոգիաների ներդրման հետ համադրելի դրույքաչափերի հիման վրա։

-----

Գնահատելով նշված բնապահպանական հիմնախնդիրը՝ անշուշտ անհրաժեշտություն է առաջանում առավել բարձր արդյունավետություն ապահովելու համար ձեռնարկել միջոցառումների մի լայն համալիր՝ ձգտելով այդ նպատակով ներդրումների ներգրավմանը, հողօգտագործման հատուկ քաղաքականության, օրենսդրական բարելավմանը՝ խիստ բարձր վարչական պատասխանատվություն սահմանելու ու մշակելու միջոցով։

Զարգացած երկրներում բնապահպանական քաղաքականության վրա էապես ազդում են նաև հասարակական կազմակերպությունները՝ հանրության հետ տարվող աշխատանքի, բնակչության հետ համագործակցելու և հանրությանը կրթելու ճանապարհով։ Մասնակիցների առաջարկած լուծումներին որպես լրացում առաջարկում ենք հետևյալ տարբերակները՝

1. Մոցմեդիայի կիրառում - կարճ, բովանդակալից ուղերձ պարունակող տեսահոլովակների, սոցիալական գովազդների պատրաստում, որոնք կարող են ավելի մեծ ազդեցություն թողնել բնակչության վրա, քան տարիներով աղբահանության բարելավման ուղղությամբ ներդրված գումարները։
2. Հեռուստա/ռադիո քննարկումների պարբերաբար կազմակերպումը ոլորտի շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, ինչը ևս բավականին լավ գործիք է ոլորտի վերաբերյալ տարբեր կարծիքները լայն լսարանին փոխանցելու համար։
3. Ցուցանակների և պաստառների պատրաստումը՝ պատկերային կամ բառային հակիրճ նպատակային ուղերձներով, որոնք ևս օգտակար գործիքներ կարող են հանդիսանալ համապատասխան վարքագիծ ու մտածելակերպ ձևավորելու համար։
4. Համայնքային քննարկումների, հանդիպումների կազմակերպումն աղբահանության տարբեր խնդիրների՝ սակագնի, տուգանքների, տեսակավորման, պայմանագրերի և այլնի վերաբերյալ կարևոր են բնակչությանն իրազեկման համար։ Այս հանդիպումներին նպատակահարմար է հրավիրել համայնքային ակտիվ խմբերին, երիտասարդներին, ՀԿ-ներին, ՉՏՄ-ի ներկայացուցիչներին և շահագրգիռ այլ անձանց։
5. Թեմատիկ դասընթացների և սեմինարների կազմակերպումը տեղական բնակչության տարբեր խմբերի համար։

## 2. Կրթական խնդիրներ

Աշխատաժողովին մասնակցող երիտասարդները հիմնախնդիրներից մեկը համարում են կրթականը: Ըստ նրանց՝ կրթական խնդիրներն առանցքային են, հետևանքները՝ կարևոր:

Ա. Որպես կրթական խնդիր առանձնացվեց ավագ դպրոցների թերացումը, մասնավորապես այն, որ ավագ դպրոցներում, հատկապես ավարտական դասարանում, դասերն իրենց բնականոն հունով չեն ընթանում:

Թերևս ճիշտ կլիներ սկսել այն պնդումից, որ այսօր ողջ կրթական համակարգն է ճգնաժամի մեջ: Հետևաբար, կրթական համակարգում վերոհիշյալ խնդիրը, դիցուք՝ ավագ դպրոցների թերացումը, ոչ թե հիմնախնդիր է, այլ հետևանք ընդհանուր համակարգային ճգնաժամի: Եվ այս շարքում արդեն կարելի է խոսել մեկ այլ թիրախային խնդրի մասին, որն է մարզերում, հատկապես գյուղական համայնքներում տարբեր տարիքային խմբերի աշակերտների չառանձնացված դասընթացները, որին սակայն մասնակիցները չանդրադարձան: Այնինչ միջնակարգ դպրոցը ևս լուրջ թերացումներ ունի:

Բ. Քննարկվեցին նաև դասավանդման մեթոդաբանական խնդիրները և ոլորտի թերացումները. դասավանդման մեթոդները և հաղորդվող գիտելիքները հաճախ հետ են մնում ժամանակակից աշխարհի զարգացման տեմպերից: Գիտական նոր բացահայտումները, դասավանդման նոր մեթոդները չեն ընդգրկվում ծրագրում, տասը տարի առաջվա առկա մեթոդներն առանձնապես չեն տարբերվում այսօրվա մեթոդներից: Արդյունքում գիտելիքը դառնում է սովորության, և այս սովորության գիտելիքն ամրագրվում ու բավականին երկար ժամանակ չի թարմացվում: Օրինակ, ֆիզիկայի դասագրքերում խոսվում է Այնշտայնի, Նյուտոնի և այլ գիտնականների մասին, սակայն համեմատաբար ուշ շրջանի գիտնականները, անկախ իրենց ներդրումից, չեն հիշատակվում ( Արբուզով, Հոբինգ, Հոֆման և այլք ):

Գ. Կրթական խնդիրների շարքում երիտասարդներն անդրադարձան նաև համալսարանների՝ Երևանում կենտրոնացված լինելու իրողությանը: Եթե անգամ բուհն ունի իր մասնաճյուղը մարզում, այն մեծ պահանջարկ չունի՝ պայմանավորված նաև կրթության ավելի ցածր որակով:

Կրթական խնդիրների լուծումը երիտասարդները տեսնում են ուսումնական ծրագրերի թարմացման և վերանայման անհրաժեշտության, կրթական ծրագրերում մարզային առանձնահատկություններին անդրադառնալու կարևորության մեջ: Մասնակիցների ստեղծարար առաջարկներից մեկը համալսարանները տարբեր մարզեր տեղափոխելն էր: Մրանով կվերանար Երևանի գերկենտրոնացվածությունը, իսկ մարզերը նոր շունչ կստանային: Դիցուք, Պետական կոնսերվատորիան Ստեփանավան տեղափոխելը քաղաքի մթնոլորտը կդարձներ ավելի ստեղծագործական, տրամադրող: Արդյունքում կակտիվանար շարժը ինչպես մարզից Երևան, այնպես էլ հակառակը: Լուծման տարբերակներից էր նաև մարզերում ոչ ֆորմալ կրթության խթանումը, մասնավորապես հասարակական կազմակերպությունների կողմից՝ տարաբնույթ թեմատիկ սեմինարների, դասախոսությունների կազմակերպման միջոցով:

-----

Ամփոփելով նշված կրթական խնդիրները և դրանց լուծման տարբերակները՝ կարծում ենք՝ մարզերի պարագայում էլ առավել արդյունավետ կլինի նախագծային ուսուցման մեթոդի կիրառությունը: Մա ուսումնաճանաչողական և համատեղ աշխատանքի կազմակերպման ձև է, որում ներգրավվում են դասավանդողներն ու ուսումնառուները, իսկ նախագծերը նպաստավոր պայմաններ են ստեղծում սեփական հնարավորությունները ճանաչելու և զարգացնելու համար: Նախագծային մեթոդն ադապտիվ է, կարող է հարմարեցվել տարբեր միջավայրերի և նպատակների: Այստեղ առավել քան էական է ուսումնական մեթոդի և քաղաքացիական ակտիվության կապը, այն առավելապես երևում է այն նախագծերում, որոնց մասնակիցները փորձում են անդրադառնալ համայնքային հիմնախնդիրներին: Ուսումնառուները տեղեկանում են, թե որտեղից են ծագում համայնքային տարատեսակ խնդիրները և պատասխանատվություն են ձեռք բերում իրենց համայնքի հանդեպ: Կոտրվում է շրջապատի հանդեպ անտարբերությունը և դրան փոխարինում է համայնքի հանդեպ սեփականության զգացումը: Ուսուցչի դերը նախագծային ուսուցման գործընթացում անչափ կարևոր է: Փոփոխվող աշխարհի և ինֆորմացիոն մեծ հոսքի պայմաններում դա մեծ մարտահրավեր է ժամանակակից ուսուցչի համար, որից լուրջ պատրաստվածություն և աշխատանքի կարևորության գիտակցություն է պահանջվում:

Նախագծային ուսուցման միջոցով ստացած ամեն գիտելիք կամ հմտություն լիովին համապատասխանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս գերակայությունների տրամաբանությանը՝ սովորել իմանալու համար, սովորել կիրառելու համար, սովորել լինելու համար, սովորել միասին ապրելու համար:

### **3. Ինֆորմացիայի հասանելիության պակաս**

Մարզերում ինֆորմացիայի հասանելիության պակասը երիտասարդները նույնպես հիմնախնդիր են համարում: Երբեմն մարզում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվության պակասը չի խթանում ցանկալի ակտիվություն: Այս կամ այն միջոցառման մասին կարելի է տեղեկանալ մարզային մամուլից, այնինչ լոկալ մամուլը ոչ միշտ է արագ արձագանքում:

Ինֆորմացիայի հասանելիության պակասը միայն ժամանցային միջոցառումներին չէր, որ վերաբերում էր: Մասնակիցները նշում են նաև մարզային դպրոցականների ոչ բավարար տեղեկացվածությունը մասնագիտական կողմնորոշման հարցում: Վերջինս, սակայն, թե՛ տեղեկատվական և թե՛ կրթական խնդիր է, սակայն շեշտակի է երկրորդը: Եթե անգամ մարզկենտրոններում, համեմատաբար մեծ քաղաքներում, գյուղերում բուհերը ներկայացնում են իրենց, ապա ավելի փոքր համայնքներում նման ներկայացումներ գրեթե չեն լինում:

Կարևորվեց հասարակական կազմակերպությունների ակտիվության հարցը: Ըստ մասնակիցների՝ մի քանի մտահոգ երիտասարդներ, իհարկե, կարող են որոշ քայլեր ձեռնարկել, բայց մյուսներին մոտիվացնելու համար ցանկալի կլինեք մեծացնել երևանյան հասարակական կազմակերպությունների ակտիվությունը մարզերում: Որքան էլ կարևոր են պետական ծրագրերը, օտարերկրյա ներդրումները, համատեղ երիտասարդական աշխատանքային մթնոլորտն ինքնին ավելի տրամադրող է:

Որպես լուծման տարբերակներ՝ երիտասարդներն առաջարկեցին խթանել մամուլ ակումբների աշխատանքը, ներգրավել մարդկանց, ովքեր պատրաստ են ոչ միայն լուսաբանել

իրադարձությունները, այլև բնակիչներին տեղեկացնել տարբեր միջոցառումների մասին: Բացի մամուլի ակումբների աշխատանքից հաշվի առնելով գիտատեխնիկական առաջընթացը՝ առաջարկվեց ինֆորմացիան տարածել նաև հաղորդագրությունների, համացանցի միջոցով:

Իսկ պատանիներին կողմնորոշելու հարցում օգնելու համար առաջարկվեց հրավիրել բուհերի ներկայացուցիչների, ուսանողների, ինչու ոչ նաև արդեն տվյալ ոլորտում կայացած մասնագետների, ովքեր ինչ-որ չափով կուղղորդեն նրանց: Թերևս հավելենք, որ այս խնդիրը ևս լուծելի է վերոհիշյալ «նախագծային ուսուցման» մեթոդի կիրառման արդյունքում:

-----

Ի թիվս առաջարկվող լուծումների՝ կարելի է դիտարկել հետևյալ կետերը ևս.

1. Մարզային իրադարձությունների մասին տեղեկատվությունն ապահովելու համար տեղում ստեղծել անհրաժեշտ ինֆրաստրուկտուրաները կամ առկայության դեպքում ներգրավել դրանցում և դարձնել դինամիկ:
2. Մարզային համայնքներում, թերևս, խնդիրը ոչ այնքան պակաս տեղեկացվածությունն է, որքան թյուր իրազեկման մեխանիզմը և մեղիագրագիտության պակասը: Արդ՝ խնդրի լուծման առաջարկվող տարբերակներից մեկը տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման միջոցների ու մեղիագրագիտության դասընթացների կազմակերպումն է:

#### **4. Մշակութային – ժամանցային**

Մարզերում առկա հիմնախնդիրներից ոչ պակաս կարևոր է մշակութային կյանքի ոչ համաչափ զարգացումը: Գերկենտրոնացվածությունը մշակույթի պարագայում առավել ակնառու է: Արդ՝ միասնական մշակութային քաղաքականության մշակման ազգային մշակույթը երկրի ողջ տարածքում համամասնորեն զարգացնելու ու ստեղծագործական ներուժն օգտագործելու, մշակութային գործունեություն իրականացնելու և մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովման անհրաժեշտություն կա:

Անհատի ձևավորման գործում շատ կարևոր է հոգևոր սնունդը, մինչդեռ մշակութային տների բացակայության պատճառով երեխան, ով աչքի է ընկնում երաժշտական, պարային, նկարչական և այլ տաղանդներով, չի կարողանում դրսևորել դրանք:

Ժամանցի կազմակերպումը ևս խնդիր է մարզերում: Խոսքը ոչ միայն գրադարանների, սրճարանների, ակումբների, փաբերի, այլև ֆիզիկական ակտիվության հետ կապված ժամանցային վայրերի (զբոսայգիներ, հեծանիվային երթուղիներ, ֆուտբոլի դաշտ, մարզասրահ, լողավազան և այլն) բացակայության կամ ոչ բարվոք վիճակում գտնվելու մասին է:

Երիտասարդների խոսքով՝ եթե ժամանակին ժամանցի վայրերի պակասը կարող էր լրացվել գրադարաններ այցելություններով, որտեղ կային տարաբնույթ գրքեր և պատշաճ պայմաններ, ապա այսօր մարզային գրադարաններն անմխիթար վիճակում են գտնվում՝ պայմանավորված թե՛ ընթերցասրահների և թե՛ գրքերի «վատ» վիճակով: Գրքեր կան, որ դուրս գրվելու հետևանքով չեն վերադարձվել գրադարան, և գրքերի պակաս է առաջացել:

Խնդիրների լուծման տարբերակը երիտասարդները տեսնում են թրեյնինգների, սեմինարների իրականացման, գրադարաններին ինքնուրույն օգնություն ցուցաբերելու, ֆիզիկական ակտիվությունը և առողջ ապրելակերպը խթանող միջոցառումների իրականացման մեջ:

----

Թերևս մշակութային ոլորտն ավելի մեծ ընդգրկում ունի, քան նշել էին մասնակիցները, և ի թիվս նշված խնդիրների՝ կարելի էր անդրադառնալ նաև մշակութային ժառանգության պահպանման, պատմամշակութային հուշարձանների վերանորոգման, զբոսաշրջության զարգացման, արհեստագործական կենտրոնների ստեղծման և էլ առավել ֆունդամենտալ հարցերի:

Մարզերում մշակութային կյանքի աշխուժացման ուղղությամբ որոշակի քայլեր են ձեռնարկվում Մշակույթի նախարարության կողմից, մասնավորապես գրադարանային նոր ձևաչափի ներդրման մասին է խոսքը, որը ենթադրում է գրադարանը վերածել նաև ժամանցի վայրի: Մարզկենտրոններում գոնե մեկ նման գրադարան ունենալու նպատակ կա: Նախարարի դիտարկմամբ՝ մշակույթը մարզեր տանելու խնդիր կա, ուստի նախարարությունը 2017թ. համար նախատեսել է հանրապետության ողջ տարածքում «Մշակութային կանգառներ» նախագծի իրականացումը, որը ենթադրում է թվով 426 տարաբնույթ միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, կինոդիտումներ, համերգներ, որոնց տոմսերը կլինեն մատչելի և հասու մարզերի բնակիչների համար:

Անշուշտ, նման ծրագրերը գովելի են և իրականացման արժանի, սակայն դրանց հետ մեկտեղ պետք է քայլեր ձեռնարկել տեղում ենթակառուցվածքային ինստիտուտների ներդրման և դրանցում մարդկանց ներգրավման ուղղությամբ: Բացի այդ, ինչպես երևում է աշխատաժողովի մասնակիցների բարձրաձայնած հարցերից, նրանք մարզերի մշակութային կյանքի աշխուժացում տեսնում են ոչ միայն «կանգառներ անելով», այլ նաև կայանատեղիներ ստեղծելով, ասել է թե համայնքներում մշտապես գործող կառույցներ ունենալով և անընդմեջ միջոցառումներ կազմակերպելով: Նման միջոցառումների կազմակերպման պարբերական ընթացքն ինքնին կապահովի՝

1. Մշակութային կյանքի աշխուժացում
2. Ավանդական արհեստների վերականգնման համար պայմանների ստեղծում
3. Արհեստագործական կենտրոնների ստեղծում
4. Թատերահամերգային կազմակերպությունների այցելություններ և հյուրախաղեր
5. Գեղարվեստական պրոֆեսիոնալ և սիրողական գործունեության զարգացման համար պայմանների ապահովում
6. Մշակութային կրթական գործունեության խթանում
7. Պատմամշակութային հուշարձանների և արվեստի օջախների պահպանում, հիմնանորոգում
8. Զբոսաշրջության զարգացում:

## **5. Գործազրկություն**

Երիտասարդները ոչ միայն մարզերի, այլև հանրապետության ամենամեծ հիմնախնդիր են համարում գործազրկությունը, որը հետևանքն է մի շարք գործոնների, մասնավորապես՝ ցածր կրթամակարդակ, մասնագիտական սխալ կողմնորոշում, մարզի առանձնահատկությունների անտեսում, համայնքներում առկա պասիվություն:

Ա. Մարգային երիտասարդության զգալի հատվածը բավարարվում է միայն միջնակարգ կրթությամբ, մի մասը, ցանկանալով շարունակել կրթությունը, չի ստանում մասնագիտական անհրաժեշտ ուղղորդում և ընտրելով սխալ մասնագիտություն՝ բուռն ավարտելուց հետո առերեսվում է գործազրկության խնդրի հետ, իսկ բարձր առաջադիմությամբ և հեռանկարային երիտասարդները չեն ցանկանում իրենց մասնագիտությամբ աշխատել մարզում, որտեղ մայրաքաղաքի համեմատությամբ ավելի ցածր է վարձատրությունը:

Բ. Մյուս խնդիրը կապված է աշխատաշուկայում թափուր աշխատատեղերի առկայության ժամանակ ինֆորմացիայի անհասանելիության և ԽՕԲ սկզբունքի կիրառման հետ, ինչի արդյունքում շատ գործունյա և տաղանդավոր երիտասարդներ զրկվում են աշխատանքի հնարավորությունից: Ուստի անհրաժեշտ է ապահովել աշխատատեղերի համար թափանցիկ մրցույթ և հետևել այդ գործընթացին: Այստեղ պետք է կարևորել «աշխատանքային ռեսուրսի ընտրություն - աշխատանքի շուկա - բնակչության զբաղվածություն» շրջապտույտը: Այլ կերպ ասած՝ զբաղվածության քաղաքականությունը պետք է մշտապես ուղղված լինի մի կողմից՝ տնտեսության կայուն զարգացման համար անհրաժեշտ աշխատուժի ձևավորմանը, մյուս կողմից՝ աշխատուժի առաջարկի ներուժային և արդյունավետ իրացման համար պայմանների ապահովմանը:

Գ. Խոչընդոտներից մեկն էլ մարգային համայնքների ձանձրալի առօրյան է, որը խիստ ապամոտիվացնող գործոն է:

Հիշյալ խնդիրների հաղթահարումը մասնակիցները տեսնում էին մասնագիտական կողմնորոշման համակարգի գործարկման մեջ, որը հնարավորություն կտա երիտասարդներին ընտրել աշխատաշուկային համապատասխան մասնագիտություն՝ հետագայում աշխատանք որոնելիս դժվարություններից խուսափելու համար: Եվ, քանի որ առկա կրթական համակարգը դեռևս չի կարող իրագործել նշված առաջարկը, մասնակիցներն այլընտրանք են համարում հասարակական կազմակերպությունների ներգրավվելը մարգային կյանքում՝ նշված խնդիրների վերաբերյալ սեմինարների, թրեյնինգների կազմակերպման, լեզուների դասավանդման և, առհասարակ, մարզի հասարակական կյանքի ակտիվացման միջոցով:

-----

Գործազրկության վերաբերյալ աշխատաժողովի մասնակիցներին հնչեցրած բոլոր խնդիրները և առաջարկները համապատասխանում են առկա իրողությանը: Սակայն պետք է նշել, որ իրականում գործազրկությունը ոչ թե խնդիր է, այլ հետևանք բերված փաստերի:

Խնդրի լուծում կարող է լինել մարզերում մանր և միջին ձեռնարկատիրության խթանումը, մարզի առանձնահատկություններից ելնելով սպեցիֆիկ ձեռնարկությունների ստեղծումը, դիցուք՝ տեքստիլ արդյունաբերության, պահածոյի արտադրության, թեյի արտադրության, տուրիզմի /էկո տուրիզմի զարգացում՝ հաշվի առնելով պատմական հուշարձանների առկայությունը, համայնքների զարգացման մարկետինգային ծրագրերի իրագործումը:

Դիցուք՝ աշխատաժողովի մասնակիցները ծանոթացան Կարեն Բաբաջանյանի հետ, ով պատմեց քաղաքային բրենդինգի, դրա առանձնահատկությունների մասին, ինչպես նաև ցույց տվեց [Ստեփանավանի օրինակը](#): Վերջին տարիներին մարկետոլոգները, PR և այլ մասնագետներ քաղաքները թե՛ զբոսաշրջիկների, թե՛ ներդրողների համար գրավիչ դարձնելու նպատակով դրանք վերածում են բրենդների: Ուսումնասիրելով տարածաշրջանը՝ դրան ամենաբնորոշ



երևույթները ներկայացվում են ոչ սովորական լույսի ներքո. պատմամշակութային կոթողների բացակայության կամ պակասի դեպքում անգամ արհեստավարժ թիմերը կարողանում են եղած ռեսուրսն առավելագույնս օգտագործել: Ստեղծարար մոտեցման շնորհիվ զբոսաշրջիկների ներհոսքը մեծանում է, պոտենցիալ տեսնելով՝ ներդրողները նույնպես շահագրգռվում են: Այսպիսով, տեղի բնակչությունը հնարավորություն է ստանում ինտեգրվելու համայնքի նոր կյանքին՝ լուծելով և՛ աշխատանքին, և՛ ժամանցին վերաբերող հարցերի մի մասը: Տարածքային մարկետինգը բարձր մակարդակով կազմակերպելու համար, սակայն, սկզբնական փուլում անհրաժեշտ են ներդրումներ, բայց որ ավելի կարևոր է՝ տեղացիների ցանկությունն ու ներգրավվածությունը:

### **Ամփոփիչ գնահատական**

Երիտասարդների բարձրացրած խնդիրները հաճախ են բարձրաձայնվում տարբեր հարթակներից: Դրանք բազմաբնույթ են և համալիր լուծման մեխանիզմներ են պահանջում, և, բնականաբար, երիտասարդները միայնակ չեն կարող լուծել դրանք: Սակայն, կարծում ենք՝ այս նախաձեռնության արդյունքը պետք է լինի որոշակի գործնական մեխանիզմների մշակումը հենց մասնակիցների կողմից, իսկ դա ենթադրում է տեղում ինքնակազմակերպման անհրաժեշտություն, խնդիրների լուծման սեփական նախաձեռնություն, ակտիվ մասնակցություն համայնքներում առկա պրոցեսներին, պատրաստակամություն և հետևողականություն: Անհրաժեշտ է ներգրավել հիշյալ խնդիրներով զբաղվող մասնագետների, կոմպետենտ և արհեստավարժ անձանց, ովքեր ավելի ճիշտ կուղղորդեն երիտասարդներին, և դա հնարավոր կդարձնի խնդիրների խորքային ուսումնասիրությունը, պարզաբանումը և հետագա քայլերի ձեռնարկը:

Նշյալ խնդիրները և դրանց լուծման մարտավարությունը տեղ են գտել նաև ՀՀ ներկայիս կառավարության, ի դեմս համապատասխան նախարարությունների, ծրագրերում և օրակարգում: Երիտասարդները, հանձնիս «Հայ մարզային երիտասարդություն» հասարակական կազմակերպության, կարող են համագործակցության առաջարկությամբ հանդես գալ և ներգրավվել մարզերում իրականացվող ծրագրերին:

Ամփոփելով աշխատաժողովի ծավալն ու բովանդակությունը՝ կարող ենք փաստել, որ նման միջոցառման իրագործումը մարզային երիտասարդության շրջանում շատ ողջունելի է: Եթե իսկապես կա մտահոգություն և պատրաստակամություն որևէ կերպ մասնակից լինել կամ նախաձեռնել խնդիրների լուծումը, ապա այս հարցում պետք է դրսևորել մաքսիմալ նախանձախնդրություն և հանդես գալ հստակ, գուցե և փոքրիկ, բայց գործնական առաջարկներով և դրանք կյանքի կոչել: Ցանկացած ողջամիտ գաղափար միշտ ունի իրագործման պոտենցիալ, իսկ իրագործումը կախված է միայն այն իրականացնողներից: Եվ ցանկացած ծրագիր հաջողում է միայն ճիշտ մենեջմենթի պարագայում, հակառակ դեպքում այն դատապարտված է: Հետևաբար նախաձեռնության կազմակերպիչները պետք է հետագա գործողությունների օպտիմալ ճանապարհային քարտեզ գծեն և քայլ առ քայլ հաղթահարեն իրենց առջև դրված խնդիրները: Եվ միայն այդ դեպքում աշխատաժողովը կտա իր սպասված արդյունքները:

## **Հավելված**

Երկօրյա աշխատաժողովի մասնակցության հայտադիմում լրացրել էին 56 երիտասարդներ, նրանցից 20-ը մասնակցելու հնարավորություն ստացան: Մասնակիցների ընտրությունը, կազմակերպության նախագահ Սաթե Ավետիսյանի մեկնաբանությամբ, կայացել էր որոշ չափորոշիչների հիման վրա՝ մոտիվացիոն նամակի բովանդակություն, մասնակցի՝ ծրագրին մասնակցելու ցանկության խելամիտ հիմնավորում, մարզերի ներգրավվածության համաչափության ապահովում:

Նկատելի էր աշխատաժողովի մասնակիցների կազմում տղաների սակավությունը, որը պատճառաբանվում է կարծրացած մտածելակերպով ու պատկերացումներով, հատկապես մարզաբնակ տղաների շրջանում: Ընդհանուր առմամբ՝ նկատելի էր երիտասարդների ցանկությունը, նպատակասլացությունը և պատրաստակամությունը: Կազմակերպիչները կարծում են՝ երիտասարդները միայնակ չեն կարող լուծել առկա խնդիրները, և աշխատաժողովը հարթակ է ստեղծում դրանք վեր հանելու, քննարկելու և լուծումներ առաջարկելու համար, ինչպես նաև տարբեր մարզերի երիտասարդներին հնարավորություն է տալիս ծանոթանալու, շփվելու, մարզերում առկա խնդիրներին ավելի քաջատեղյակ լինելու:

## Գրականություն

1. <http://mes.am/hy/qaramya/>
2. <http://urbanfoundation.am/wp-content/uploads/2015/04/SWM-Armenia-Overview.pdf>
3. [http://wmp.ge/wp-content/uploads/2016/08/Manual-on-Waste-Management\\_ARM.pdf](http://wmp.ge/wp-content/uploads/2016/08/Manual-on-Waste-Management_ARM.pdf)
4. [http://w3.cenn.org/wssl/uploads/documents/Mining\\_in\\_Armenia\\_A\\_Comprehensive\\_Overview\\_Arm.pdf](http://w3.cenn.org/wssl/uploads/documents/Mining_in_Armenia_A_Comprehensive_Overview_Arm.pdf)
5. [http://eprints.lse.ac.uk/54755/1/Ishkanian\\_Civil\\_Society\\_Development\\_Enviromental\\_Activism\\_America\\_2013.pdf](http://eprints.lse.ac.uk/54755/1/Ishkanian_Civil_Society_Development_Enviromental_Activism_America_2013.pdf)
6. <http://www.mnp.am/>
7. <http://www.mediamax.am/am/news/special-report/5052/>
8. <https://armenpress.am/arm/news/689259/>
9. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=9314826>
10. <http://www.panorama.am/am/news/2015/05/19/syuniq-region-new-employment/501>
11. <http://boon.am/learning/>
12. <http://boon.am/positive-changes/>
13. <http://www.unesco.org/new/en/education/networks/global-networks/aspnet/about-us/strategy/the-four-pillars-of-learning/> - UNESCO- Ի սկզբունքների աղբյուրը.
14. <http://www.employment.am/>
15. <http://www.armtimes.com/hy/article/97405>
16. <http://www.aysor.am/am/news/2017/01/12/%D4%B3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%A6%D6%80%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%81-%D5%A4%D5%A5%D5%BA%D5%AB-%D5%AB%D5%B6%D6%84%D5%B6%D5%A1%D5%A6%D5%A2%D5%A1%D5%B2%D5%BE%D5%A1%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/1194201>
17. <http://gyumri.info/news/336>
18. <http://armef.com/hy/news/meknabanutyun/taracqayin-zargacumy-razmavarutyun-uni/>
19. [http://armef.com/hy/news/verlutsutyun/article\\_1398576079/](http://armef.com/hy/news/verlutsutyun/article_1398576079/)
20. <http://www.civilnet.am/news/%D5%A9%D5%BE%D5%A5%D6%80%D5%A8-%D5%AD%D6%85%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A5%D5%B6>
21. <http://www.azatutyun.am/a/24390509.html>
22. <http://braind.am/portfolio/stepanavan>
23. <http://boon.am/learning/>
24. <http://www.mlsa.am/up/MAR45-9.pdf>
25. <https://www.youtube.com/watch?v=g7s1SoT6GD0>
26. <https://www.youtube.com/watch?v=bYxZIAPanoY>
27. <https://www.youtube.com/watch?v=TBGpjQrJZwY>
28. <http://www.azatutyun.am/a/28197765.html>